

վտանգաւոր կերպով նուազած է, չուտով նոր ներարկում մը ընել տալու է:

Միւս կողմէն ճիշտ նոյն անպատեհութիւնն է որ տեղի կ'ունենայ շաքարախտին մէջ փայծաւ զայոյզով (Insulina) ու վտանգաւոր անարիւնութեան մէջ ատենօք գործածուած խնամքի եղանակին համար: Միայն թէ արիւնասիրութեան ներարկումները երակային ըլլալով՝ հիւանդը չի կրնար ինքնիշխան ընել:

Կը հասկցուի, նպատակին դեռ բոլորովին հասած չենք: Նոր նիւթեր փորձուելու հետ են, ու կրնանք վստահ ըլլալ՝ թէ կարելի պիտի ըլլայ լաւագոյն արդիւնքներ ձեռք բերել:

Ընդհանուր տեսութիւն մը տալով, այսօր այս

առեղծուածային ախտն ալ կը հետապնդուի ու կը հարուածուի իր բոյնին մէջ: Ու կարելի է յուսալ թէ չուտով ամբողջովին զինաթափ կարելի պիտի ըլլայ ընել զայն իր մահաբեր ու նենգաւոր գէնքերէն:

(Տեսնուած է որ Արիւնի մածնուի ժամանակը ամսէ ամիս կը տարբերի արիւնասէրներու մէջ. ու դժուար է Շեֆիլտի ներարկումի չափը գտնել իւրաքանչիւր պարագային համար: Ահա թէ ինչո՞ւ ուրիշ նոր փորձերու տուեալները՝ վերը նկարագրուածէն նուազ լաւ արդիւնքներ տուած են):

Թրգմ. Հ. Ա. Ֆ.

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

ՄԱՅՐԻԿԻՍ

Լըքուած անկիւնը գաւթին կիսաւեր

— Կոտորածի հէք մնացորդ —

Վերագըտանք զայն սիրտ մ'որպէս՝ զոր մաշեր
Են հոգն ու վիշտն ու կարօտ,

Օր մ'երբ տանջուած, արեւակէդ ու տփոյն
Երկու որբեր, այրի մ'հէք,

Աքսորի սեւ ճանապարհէն դարձանք տուն
Ճամբորդի պէս նաւարեկ:

Քարուքանդ էր ակութը մեր, աւերակ,
Որպէս դամբան մահաստուեր...

Չէր ճարճատեր ալ այնտեղ կայծ մը կըրակ,
Սեմն ալ մամուռն էր պատեր:

Ո՞ւր էր, աւանդ, մեր հին բունիկն՝ ընդունող
Ամէն գայլայլ ու արեւ,

Ո՞ւր էր ծաղկած այգեստանը լուսաշող
Վառ վարդերն ու թարմ տերեւ....:

Մառանն էր ճոխ, կարասներու մէջ մաքուր՝
Մեղրը, կարագն ու շաքար,

Հօրս քրտինքին ձօն՝ մանանայ երկնատուր՝
Կը հոսէին անըսպառ....:

Խըմորը պերկ, զոր տաշտին մէջ, լիաբար
Մայրիկս աշխոյժ կը շաղէր,

Կը նստանանք, կ'առատանանք, կը պոթկա՞ր
Իր սիրոյն պէս ինքնանուէր:

Աւանդ, ոչինչ կը մընար մեր լուսաւոր
Անցեալէն... Լսի լըբաւեր

Ժանգոտ 'Նօմանն' որ կաղանդէք մ'իրր աղուոր
Հայրիկս Պօլսէն էր բերեր:

Արծաթաշող ասեղն անոր նուրբ ու սուրբ
Կարեր էր բիւր լաթ, թիկնոց,

Հարսի բեհեզ, նորածինի խանձարուր,
Մեր խորանին նոր ծածկոց:

Եւ անիւն իր կարուհիին հետ ճարտար
Ներգեր էր երգ դաշնագեղ,

Իր թաւալումն եղեր մրմունջ ոսկեբառ
Սիրերդ, օրերդ, մեղմ գեղգեղ....:

Լուռ է հիմա... Մօրըս սիրտին պէս տանջուած
Ու սըղաւոր անոր պէս.

Արծաթաղօծ անիւն իր ժանգ է պատած,
Շարժն իր դարձած՝ դժգ մը հեղ....:

* * *

Ա՛խ, կը յիշես, ըսէ, կայտառ մանուկն այն,
Եղբայրս անմեղ, սեւաշուի,

Որ կը փորձէր բիւր հընարքներ կանթիդ վրան,
Էր ընկերն իր խաղի:

Իր ինքնաշարժն էր, քիչ մը կաղընթաց,
Շըռընդալից, թաւալուն,

Կամ երազող հոգին կու տար քեզ յանկարծ
Օգնաւի մ'ահեղ շուն....:

Ձըմեռն ալ երբ փռէր ճերմակ իր սաւան,
Ծածկէր տանիքն ու փողոց

Ու երբ մոռնար մեզ մեր կաղանդ Տէր Պապան,
Մըխին փըլած, դուռը գոց,

Դուն այն տանն կ'ըլլայիր 'Նաւն հեքեաթի
Կը տանէիր մեզ հեռուն,

Գեղակառոյց երազներուն հրաշալի
Կը բանայիր լոյսէ դուռն....:

* * *

Հիմա ոչինչ ունիմ այլեւս յուսալիք
Ո՛չ իսկ պատրանք մ'օրօրուն...

Տանջուող հոգիս ալ կարծես փակ է գալիք
Վարդ ու զըւարթ օրերուն:

Չես իսկ կարող կարել ըզգեստ մը սուգի,
Կանթըդ ալ ձեռք մ'է կոտրած...

Լալկան մրմունջդ հոգիս մէջ կը սուգի
Գիրերդ հեքեաթ անիմաց:

Բայց կը տանիմ քեզ հետս քաղքէ միշտ քաղաք
Յոգնատանջ սիրտ մ'իրր հըլու,

Կորած Եղբորս, քանդուած Տունիս յիշատակ՝
Քեզ արցունքովս իւղեւու....:

Փարիզ, Օգոստոս 1943.

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ